հրաման դնէին 'ի դիր հանդստեան · և ոմանք յուխտաւորաց արդիլեալ էին 'ի վանս իբր 'ի բանտի, և ոչ կարէին ելանել արտաքս, մեծամեծք եւ փոքունք այլազգեաց իբրև զդստերս տգրկի ծծէին զարիւնս քրիստոնէից, և զոր առնուին՝ ոչ ինչ համարէին իբրեւ զչառեալ, անհնարին սրտմտութեամբ սպասէին կլանել զվանօրայս հանդերձ վանականօք, որք իբրև զիետրաթափ թռչուն անկեալ էին 'ի ծուղակս նոցա՝ ոչ փախչիլ և ոչ թագչիլ ուրեք · տխրութիւն և վիշտ գալստեան կուսակալին պաշարեալ էր զնոսա, և ինքեանք կապեալ յաղքատութեան որպէս յերկաթս, պակասեցան գնողք և վաճառողք ոսկւոյ և արծաթոյ · այսպէս ամենայն սիրտ 'ի վէրս և ամենայն գլուխ 'ի ցաւս։ Այսպիսի տխրութեամբ և ցաւօք օգնութիւն հայցէին յաղգայնոց Կոստանդինուպոլսոյ։

Իսկ այլազգիք Երուսաղէմի յետ այսքան տպիրատութեանց՝ գրեցին գիր ամբաստանութեան զքրիստոնէից առ կուսակալն Դամասկոսի, և առ ճէզար Ահմէտ Փաշա յԱքքէ, մի՝ զի բերեալ հրաման ինչ՝ առաւել բռնասցին 'ի վերայ նոցա, երկրորդ՝ ծածկել կարասցեն զառաջին չարիսն՝ զոր անցուցին ընդ քրիստոնեայս։

Սակայն քրիստոնեայք փութով ազդ արարին զնեղութիւնս իւրեանց առ Բդեշխն Աքքէի, և նա գրեաց առ մեծամեծս քաղաքին չնեղել զքրիստոնեայս՝ եւ չծանրանալ 'ի վերայ նոցա (1798 · յ9 Սեպտեմբերի)։

Ի սմին ժամանակի վանականեցաւ Զաքարիա Պատրիարք կաղզուանցի՝ եւ կալաւ զԱթոռ Պատրիարքութեան Կոստանդինուպոլսոյ Դանիէլ Եպիսկոպոս, որ յետոյ ընտրեցաւ Կաթուղիկոս Ս · Էջմիածնի։ Ի սմին ամի Հայք ետուն ճէզար Փաշայի և զօրաց նորա 63,416 դահեկան (1799 · 'ի 25 Յուլիսի)։ Բազմաթիւ նամականիք Պետրոս Պատրիարքի՝ զորս գրեալ է առ իշխանաւորս ազգին 'ի Կոստանդինուպոլիս ցաւօք սրտի՝ յայտ առնեն զաղէտս դառնութեան ժամանակին, որպիսիք են՝ հարկապահանջութիւնք անվերջանալի փոխանակագիրք, մերժելն կարի երկիւղալի՝ զի առաջի կայր նոցա անկանիլ 'ի գանս և 'ի տանջանս, որպէս տեսանէին զայլս, խնդրեաց հրաման 'ի նոցանէ երթալ 'ի Բիւզանդիոն՝ զի թերեւս զերծցի 'ի